ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Վահան Ավետիսյանը

Սույն թվականի հունիսի 8-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Ավետիսյանը:

Վահան Ավետիսյանը ծնվել է 1959 թ. Երևանում: 1981 թ. ավարտել է ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1981 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում՝ սկզբում որպես ինժեներ, այնուհետև՝ կրտսերից մինչև առաջատար գիտաշխատող:

Վահան Ավետիսյանը 1989 թ. Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի «Տեսական մեխանիկայի» մասնագիտացված խորհրդում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Մանիպուլյացիոն ռոբոտների տրանսպորտային շարժումների օպտիմալ ղեկավարումը» թեմայով: 2003 թ. նույն մասնագիտացված խորհրդում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Մեխանիկական համակարգերի դիրքավորման օպտիմալ և սուբօպտիմալ ղեկավարումը» թեմայով: 2009 թ. Վահան Ավետիսյանին շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

2004-2009 թթ. դասախոսել է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի օպտիմալ կառավարման և մոտավոր մեթոդների ամբիոնում որպես դոցենտ: 2014 թ.-ից ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր է:

1992-2008 թթ. Վահան Ավետիսյանը եղել է ՀՀ պետբյուջեից ֆինանսավորվող գիտական թեմաների ղեկավար, 2008-2009 թթ.՝ Ֆրանսիայի (ք. Նիս) ինֆորմատիկայի և ավտոմատացման ազգային հետազոտությունների ինստիտուտում և ԱՄՆ-ի Իլինոյսի համալսարանում՝ հրավիրված հետազոտող:

Վահան Ավետիսյանի գիտական հետազոտությունները վերաբերում են դինամիկական համակարգերի, այդ թվում՝ մանիպուլյացիոն ռոբոտների, օպտիմալ և սուբօպտիմալ ղեկավարմանը, օպտիմալ փնտրման խնդիրներին և բախումից խուսափող դինամիկական օբյեկտների օպտիմալ ղեկավարումների կառուցմանը: Նա ավելի քան 80 գիտական հրապարակումների հեղինակ է: «Оптимальное управление электроприводами промышленных роботов» մենագրության և «Վարիացիոն հաշիվ և օպտիմալ կառավարում» դասագրքի համահեղինակն է: Վահան Ավետիսյանի ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում «Տեսական մեխանիկա» մասնագիտությամբ պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն:

Վահան Ավետիսյանը տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի անդամ է, ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի 047 մասնագիտական խորհրդի անդամ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն